ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD
Poste Restante
Londres. [Angleterre].

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար։

Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։

ՀՐԱՏԱԿ

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 Ֆրանկ.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայ կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը։

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 10 ՓԵՏՐՎԱՐ Nr 10 | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՄԻ ԵՐԵՍ
ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Օսմանեան սուլթանը նշանաւոր է իր փառահեղ պալատով, հարէմով և արաբական ձիերով։ Նա ունի առաջնակարգ շքանշաններ՝ իր պատերազմական յաղթութիւններում ձեռք բերած և մի ճաշակաւոր խոհանոց, որի համեղ կերակուրները նրբութեամբ ու զգուշութեամբ են մաքրազարդվում վեհափառական բերանով։ Եւ որովհետև պալատականների հաւատարմութեան վրայ կասկած չունի, սուլթանը նախ քան ուտելը՝ կանխապէս կերակուրները քննել է տալիս յատուկ վստահելի մարդու ձեռքով, որ մէջը թոյն չը լինի։ Իր թագաւորութիւնը նշանաւոր եղաւ օսմանեան փառք կրող պատմական դէպքերով, որպիսիները երբ և է կարմրացրել են օսմանեան պատմութեան էջերը։ Թիւրքիայի քաղաքական ու տնտեսական գեղեցիկ կարգերի շնորհով և իր սեփական հայրախնամութեամբ սուլթանն իր հպատակ ժողովրդներին ծայրահեղ դժգոհութեան ու յեղափոխութեան է հասցրել։ Նրա օրով իր ընդարձակ կայսրութեան մէջ խաղաղութիւնն ու կարգապահութիւնը տիրել է ամեն կողմ։ Դա շնորհով Համիտի և իր կազմած „Համիտիէ“ քիւրդ բաշըբոզուկ հեծելազօրների, որ մասնաւորապէս Հայաստանում քար ու քանդ արին շատ հայ գիւղեր, առևանգեցին շատ հայ կիներ, շատ հայ սպանեցին և Սասունի կոտորածին քաջաբար մասնակցեցին։ Սուլթանի արի ոգին իր հմայքով վարակել է միշտ իր զօրքերին, որոնք ջարդվում ու փախչում են որ և է ուրիշ տէրութեան զօրքերից, բայց, ընդհակառակը, մեծ քաջագործութիւններ են անում, անզէն, անպաշտպան, քիչւոր հայերին հաղարներով կոտորելով, կենդանի թաղելով, տանջելով, անդամահատելով, մանաւանդ հայ կիներին պղծելու և հայ մանուկներին զորմանալի, բայց անօրինակելի, հերոսութեամբ մորթելու վարժ ընդունակութեամբ։ Այդ պարագաներում տեղի է ունեցել մէկ ապշեցնող երևոյթ, որ երբէք չէր սպասվում. գազանաբարոյ, չար քիւրդն անդամ սոսկալով ու զզվելով, անկարող եղաւ նախանձելու սուլթանական զօրքերի այդպիսի պատմական սխրագործութեանը։ Սասունի գետակները թիւրք զօրքերի արած հրաշքով կարմիր ներկվեցան արիւնից և սկսան իրանց դատարկված լեռներում աւելի բարձրաձայն կանչել ու աղմկել։ Սուլթանի լէգէօններն իրանք անգամ չը կարողացան իրանց արիւնաշաղախ երեսներն ու ձեռքերը լուալ ու մաքրել նրանց արիւնալի ջրերում։ Եւ այդպէս էլ անլուայ մնաց Նրանց ճակատին Սասունցի հայ կտրճի, հայ յղի կնկայ և սրա մանկան արեան դրոշմը, իբրև միակ փառք, որ կտակում է ապագային 19-րդ դարու վերջերի թիւրք սուլթանի թագաւորութեան պատմութիւնը։

Սուլթանի կայսրութեան ներքին կարգերն ամենաանկարգ վիճակից կարգին են։ Թիւրքիայի այդ առանձնայատկութիւնը նրա եւրոպացի պաշտպանները վերագրում են սուլթանի մտքը, որ իբր հայ ծնողների աղջիկ է։ Հաւատացնում են, որ այդ կինը, մարգարէաբար նախագուշակեց հայկական յեղափոխութիւնը (էլի՞ հայն է հայի տուն քանդողը) և հայկական խորամանկութեամբ զինվելով, իր սուլթանազգէ որդուն կրթելիս՝ փոքր ինչ խիստ շշափելի կերպով է նրան դասեր տվել, թէ երեխային պէտք է ծեծել, որ խելօք լինի։ Երբ սուլթանազգէն նստեց իր արքայական գահի վրայ, որ, ասում են, արեան պէս կարմիր է և շատ

ԱՐԻԵԱԾԱԳԻՆ
ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԻՐ ՏԻԿԻՆ Մ. Ն...ԻՆ.

(Շարունակութիւն) *)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
I
ՕՐԻԱՑ ԽՆԴԻՐԸ

Գալէն մի քիչ կանգ առաւ. ներքին յուզմունքը նեղում էր նրան, այնպէս որ նրա շունչը ընդհատվում էր։ Նա վեր վերցրեց սառը ջրով լիքը բաժակը եւ ագահաբար կուլ տվեց, կարծես իր սրտի բորբոքումը ուզում էր զովացնել նրանով։ Ծերունի Մարտիրոսը մէկը փիսի ետեւից իր չիբուխի ղալեանն էր լցնում՝ եւ ուժով-ուժով քաշում։ Նրա կնճռոտած դէմքի վրայ երեւան էին գալիս այնպիսի արտայայտութիւններ, որոնց վրայ կարելի էր կարդալ արհամարհանք ու զզվանք։ Նրա կիտված սպիտակ յոնքերի տակ ծերութիւնից աչքակապիճների խորը թաղնված աչքերը նայում էին սուր հայեացքներով, որոնք թափանցում էին կարծես մարդու սրտի ամենամութ խորշերը։ Նա մէկ առանձին համակրանք էր ցոյց տալիս դէպի Գալէն եւ այդ դեռատի երիտասարդի մէջ նա տեսնում էր թաղնված մի վեհ ոգի, այնպէս որ միշտ գուրգուրանքով էր տալիս նրա անունը։ Նա մերթ ընդ մերթ իր քթի տակից հազիւ լսելի ձայնով հայհոյում էր, մէկ այս, մէկ էլ այն վատ քահանայի անունները տալով։ Միրջանի գոյնը բոլորովին փոխվել էր. նրա դէմքը ստացել էր սպառնացող մութ ամպի ձեւ, որն ահա իսկոյն պէտք է որոտար եւ շանթահար կործանէր ամեն ինչ։ Մամին միշտ իր տէր-ողորմեայով զբաղված էր եւ գոհ էր երեւում, որ առանց իրան կարդ գցելու՝ քրիստոսի անունն էին տալիս. իսկ ինքն իր դարդին բաւականանում էր միայն խաչակնքելով եւ սատանին նալլէթ կարդալով։ Միւսների վրայ տիրում էր նկատելի անհանգստութիւն ու հոգեկան ծայրայեղ տագնապ։

— Այդ կեանքի ծանր պայմաններէն ձանձրացող, աշխատութենէն դասալիք և ուրիշներու քրտինքով ու արիւնով ապրող անխիղճ օտարականները — շարունակեց Գալէն — ի հարկէ միշտ պէտք է աշխատին գգուել ժողովրդի տկար կողմը, անոնց կոյր նախապաշարումը. պէտք է ջանան աւելի թանձր քողով ծածկել և մինչև անդամ կուրացնել ռամիկի աչքը, անոր արդէն մութ գիտակցութիւնը, որ չը տեսնէ իրենց բարոյական կեղտոտութիւնները. պէտք է աշխատեն, որ իր անտանելի գործունէութեամբ ոսկրացած հասարակ ժողովուրդը չը նշմարէ այն տասնեակ մատներով թանձր ճարպը, որ ուռեցուցած է իրենց փորը եւ մարդկային բնական կազմվածքն աւրելով, տուած է մի հրէշային ձեւ, մսի եւ իւղի մէկ ահագին զանգված, մի ոտեւ կոյտ, որ աշխատող ժողովրդի քրտինքի անհամար կաթիլներէ է յառաջացած։ Այսօր մեր հասարակ էսնաֆ ու գիւղացի դասակարգը կաշխատի մինչեւ իրիկուն, կը մաշէ իր կեանքը եւ հազիւ ձեռք կը ձգէ իր օրական սեւ հացի ստակը. անոր զաւակները միշտ մերկ են եւ մառանը միշտ պարապ. իսկ անգին տարին տասներկու ամիս նրստուկ կեանք վարող եւ որ եւ է անձնական գործի համար իր մատը չի շարժող եւ միևնոյն ատեն հեշտութիւններու, շռայլութեան, զեղխութեան եւ գինիի հետամուտ մեղկ,

*) Տես „Ազատակ“ Nրs 7, 8, 9

թանկ գին ունի, իր այդ բարձրութիւնից երբեսայի պէս պստիկ երևեցան իր հպատակ թշուառները, մանաւանդ հայերը։ Այդ օրից ի վեր, փորձառու իր անցեալից, նա հրաման արձակեց նրանց կրթել կանոնաւոր եղանակով։ Եւ յիրաւի, ամեն-մի հայ, որ թիւրք պաշտօնեայի ձեռքն է ընկել, ունի իր մարմնի զանազան տեղերում անջնջելի հետքեր մտրակի, կոտրուածքի, այրուածքի, վերքերի և սուլթանական հայրագորով կրթութեան այլ և այլ գեղեցիկ հետևանքների։

Սուլթանական պալատը շատ գիշեցիկ է թէ դրսից և թէ ներսից և իր տպաւորութեամբ ուղղակի հակապատկեր է կազմում իր բնակիչների, բացի դրանց մի մասի — հարէմի։ Այս վերջինի գոյութիւնը, սակայն, պատմութեան չը պատկանելով, մենք, որ գեավուր ենք, չը պիտի յանդգնենք նրա ստրկական, բանտային ու տարտիալի խաղաղութիւնը վրդովել։ Իսկ մնացած բնակիչները բաղկացած են նոյն իրանից՝ վեհափառից, պալատականներից, ուտիկանական պահակներից, ծառաներից, կառապաններից, ձիապաններից, ձիերից և ճաշերի համար պատրաստելիք դեռ չը մորթված բազմատեսակ կենդանիներից ու հաւերից։

Պալատական սովորութիւններն ու բարքերը կրում են օսմանեան նախնական ժամանակների ամենանուրբ յատկութիւնները և 19-րդ դարում ձեռք բերված քաղաքավարական բոլոր ելևէջները։ Այնտեղ չէ կարելի իմանալ թէ դիմացի խօսողը հագած ունի դիմակ, թէ ոչ։ Այնտեղ ինտրիգներ իրարու դէմ և վերջըն էլ սուլթանի դէմ, իբրեւ իրանց գոյութեան ու մեծութեան անհրաժեշտ պայման՝ պալատականների մէջ կատարվում են ամենայն ճարպիկութեամբ — ինչպէս ամեն բան — և միմիայն ազատ, պարապ ժամերին, որ միասին առնրված՝ օրւայ մէջ կազմում են առնուազն 24 ժամ։ Շողքորթութիւն, կեղծաւորութիւն, քծնութիւն, կօմպլիմէնտներ ամենանուրբ ճաշակի, տեսակցութիւններ ամենաընտիր, ամենանուաստ ձեւակերպութիւններով — այդ բոլորն, իբրեւ քաղաքավարութեան ամենաբարձր արտայայտութիւն, այնտեղ գործադրվում են ջերմեռանդութեամբ։ Այդ դպրոցից դուրս գալով, սուլթանի [illegible] ապահովներն անգամ թիւրք փաշայութեան ու [illegible]կնականութեան անգամ լինելու են արժանանում, — և իրաւամբ։ Սուլթան ինքը, որ երբէք չէ մտածում և բնաւ չէ տանջվում այն մտիքով (մոլութեամբ), թէ իր կեանքին կարող է վտանգ սպառնալ հաւատարիմ պալատականների կողմից, այլ միայն չափազանց զգոյշ է և ամեն միջոց ձեռք է առնում այդպիսի մի դաւի դէմ, որ կարող է պատահել, — սուլթանն ինքը, ասում ենք, խօսք չը կայ շըրջապատված, գուրգուրված, փառաւորված է միշտ այդ ընտիր քաղաքավարական սովորութիւնների ու բարքերի բոլոր նրբութիւններով ու ցանցով։ Նրա սրահը քիչ մարդ իրաւունք ունի մտնելու. միայն մի քանի մեծերը։ Մտնողը դրսից, ամենախոնարհ կերպով սովորական եռական բարեւը մատուցանելով, ջրբէջրբ մօտենում է սուլթանին և ջերմեռանդութեամբ հանբուրում ու լզում նրա հողաթափները, որ շատ գեղեցիկ են... ի հարկէ, միայն իրանց արտաքինով...

Մեր այդ բոլոր նկարագրութիւնները, որքան էլ լուսանկարչական լինեն, դեռ չեն կարող ցոյց տալ թիւրքական կարգերի, պալատական բնակիչների, նրանց սովորութիւնների ու բարքերի ամբողջ հրաշալիքները։ Այդ բոլորը փառաւոր են, ինչպէս սուլթանի անունը, ըստանչելի են, ինչպէս „Համիդիէյի“ ղէնքերը և սուլթանի արաբական երիվարը. ձեռք են բերված սասունական և այլ մեծ յաղթութիւնների արիւնով, որով ներկվում է սուլթանի արքայական ծիրանին, և այնպէս ընտիր, նուրբ, ճաշակաւոր են, ինչպէս չեն անմենևին սուլթանական ճոխ սեղանի ամենահամեղ համեմները։

„ՏԻԵԶԵՐԱԿԱՆ“ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱՐԱՆ

„Հոդով է. ներկայ են հետևեալ լրագիրների ներկայացուցիչները. „Հայք“, „Արմենիա“, „l'Arménie“, „Դրօշակ“, „Ara“ և „Հնչակ“։ „Ապտակի“ ներկայացուցիչն ընդունված չը լինելով ժողովում, պահվեցաւ վարագոյրի ետեւը։ Ներկայ էին ևս հետևեալ ազգային գործիչները. Կ. Թումայեան, Յակոբեան, և մի քանի նշանաւոր դիմակաւոր ու... անդամակ վաճառականներ Լօնդօնից, Պարիզից, Մանչէստրից, և այլն...

Հոդովը միաձայն, բացի մի ձայնից որ պ. Յակոբեանինն էր, նախագահ է ընտրում „Հայքի“ խմբագրին, իբրև նախաձեռնող „տիեզերական միութեան“ խնդրի։

„Հայքի“ խմբագիրը. — Մեծապատիւ տեարք, վասնզի զնախաձեռնութիւնս Միութեանս խնդրոյն իմ ազգային գրչիս տակէն ելած է, քանզի կարեւոր է և յոյժ սոսկական ներկայ երկունքն ազգային, որպէսզի միութեան խնդիրն իւր կարևորութիւնն ալ չունենայ, զի եթէ անմիաբան գործեն գործիչք հայոց, քանդեն զտունն Հայկայ և թողուն զասպարէզ միակ „Հնչակի“, որ չէ բաւական հայ և է շատ աշխարհաքաղաքացի և ոչ բաւական քրիստոնեայ, որովհետև հայաստանեայց եկեղեցւոյ („Արմենիա“ի ներկայացուցիչը կատաղած. — դու բողոքական ես)... Ուրեմն, որպէս զի և քանզի զազգային գործ միութիւն, տիեզերական միութիւն կը պահանջէ, ձեր խորհրդածութեան կուտամ զայս յոյժ մեծ խնդիր, որովհետև եթէ միութիւն չը լինի, հայ ազգը չազատիր, զի, որպէսզի պէտք է զդիւանագիտական գործունէութիւն ընթանայ համահաւասար յեղափոխական գործունէութեան, որ է բաւական մեծասակար և հայ ժողովուրդը գլորեց յանդունդս... յանդունդս... „Հայքի“... „Հայքի“ խմբագրիս... գլխի... մէջ... (շփոթված խօսքեր է փնտռում)... յղացած այդ մեծ խնդիրը, որպէսզի, վասնզի, որովհետև, զի, քանզի...

Պ. Յակոբեան ընդմիջելով նախագահին. — Տեարք, խօսք, խօսք կուզեմ, կը պահանջեմ, որովհետև ես նախագահ եմ հայկական միութեան, որ մարմին չունի, բայց գլուխ ունի, որ ես եմ.... Տեարք, 20 տարիէն ի վեր ես կը գործեմ ի Լօնդրա հայկական դատին համար, ամեն հայ և անգլօ-հայ ընկերութեանց նախագահ կամ փոխ նախագահ ես եմ եղած... նոյն իսկ ինքը Ջ. Բըռայսը զիջած է նախագահական պաշտօնն ինձի... Ուստի ժողովուրդ առջև. կը յարուցանեմ ապօրինութեան խնդիր մը, որ „Հայքի“ խմբագրին տրուեցաւ նախագահութեան պաշտօնը... Ես պիտի ըլլամ նախագահ... քսան տարիէ ի վեր կը գործեմ.... զիս չէք ճանչնար.... (երեսը փայլում է)։

„Արմենիայի“ ներկայացուցիչը. — Այո, այո, ես քեզ կը ճանչնամ շատոնց ի վեր, բայց եաքը կռուեցանք... Այդ ամենը ոչինչ... Հնչակիստ անիշխանական, անկրօն, ազգակործան, թէ թուրքի, թէ ռուսի աջենդ... Այո, նա չեմ ուզեր ճանչնալ, որ քուն չի տար զիս իր դատինները... Նա իմ տունս քանդեց, թերթս փլատ անուանեց, իմ անունս կոտրեց.... իսկ ինքը այնքան արեան մէջ մտաւ, Սասունի անտառներու կուսութիւնը պղծեց... Նա մեծ սակար է, շաղակրատ է, շարլատան է, ազգակործան է.... Հայրիկի դէմ փրփրաց, Փորթուգալեանի դէմ ալ փրփրաց... Ամենից առաջ կառաջարկեմ այդ խնդիրը լուծել և անպատճառ ինձ հետ համաձայնիլ (ժամերը թափվում է „Արմենիա“ի ներկայացուցչի երեսից. ակնոցները վայր են ընկել քթիցը, որ աւելի է երկարացել վերջին ժամանակներս. ինքը եփած խեցգետնի պէս կարմրըրել է... ակռաները բութ, ինչպէս իր խելքը...)

(կը շարունակվի) „ԱՊՏԱԿԻ“ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ։

թուլամորթ ծոյլ անհատները, փարթամ սեղան կը վայլեն, կուտեն, կոչնչացնեն այն ամեն բաները, որոնք արտադրողը իր դաժան աշխատութենէն համը նայելու անգամ ժամանակ չէ ունեցած։ Իսկական խնդիրը ադոր մէջնէ։ Եւ այդ ոնձերն են, որ եւ յաւիշակութիւնով կը նկարագրեն մեզ միւս աշխարհի անանց երջանկութիւնը, իրենց արծաթապատ դաւազաններով կը չափեն անոր ոսկէ փողոցները, ադամանդեայ պալատները եւ կաշխատին օր առաջ հոգին հանելու ժողովրդին, որ երթայ այն անվերջ երջանկութեան արժանանայ, Աստուծոյ տեսութիւնը վայելէ եւ յաւիտեանս յաւիտենից մխիթարուի, թողնելով կղերին աշխարհը իր փառքով ու վայելքներով, որ այդպիսիներու խօսքով չի վայելեր տգէտ կոշտ ու կոպիտ աշխատաւորներուն... Սակայն, ինչպէս կը տեսնուի, — բարձրացրեց ձայնը Գալօն, շեշտելով խօսքերը — հասարակութիւնը սկսեր է խիլքի գալ, նա արթնցած է եւ սարսափած կը տեսնէ այն մռելական կմախքը, որ քայլ առ քայլ կը դիմաւորէ զինքը։ Անոր պաղ ձեռքեր սկսած են արդէն շոշափել իր նիհար մարմինը. սարսուռը մտած է անոր մէջ։ Եւ ահա այսօր նա այդ ամենուն ետեւ տեսնել սկսած է այն քամնելի ուրուականը, որ թշուառութիւն կը կոչուի. եւ այդ անսպասելի ու տնաքանդ հիւրը իր տունը կառաջնորդեն մարդկային ազգի երկու ինքնակոչ ներկայացուցիչներ. թուլամորթ, վատ կղերականները եւ թիւրք բռնակալութիւնը։ Եւ որովհետեւ ժողովուրդը սկսած է արթնանալ եւ իր անհաստատ քայլերն ուղղել. որով հետեւ ինքնաճանաչութիւնը կամաց կամաց յայտնուել սկսած է անոր մէջ եւ իր այդ նոր ստացած ոյժի զօրութեամբ, ուշ կամ կանուխ պէտք է իր վրայէն թափէ իր արիւնը ծծողները, բնական է որ խաւարի զաւակները եւ բռնակալութեան անկուշտ որկրամոլները պիտի նշմարէին այդ լուռ շարժումը, որ երթալով օր է օր զգալի կը դառնայ. եւ նշմարած ալ են։ Օրինակը մեր առջեւն է. ահա անոնց ներկայացուցիչներէն մին. Արմաշու վանքին խոտակեր ճգնաւորը իր կոնդակներով տարի է մը ասդին սկսած է ժողովուրդը քնացնել աշխատիլ։ Այդ մէկ կողմէն ժողովրդի արիւնով սնված եւ միւս կողմէն սուլթանի առատ պարգեւներով եւ ժպիտներով կաշառվածները կըսեն. „ժողովուրդ, այն ազատութեան անուշ երգերը, որ քու ականջիդ կերգեն, մի հաւատար. այդ անձեր ստահակներ են, սրիկաներ, ազգին շահը չը մտածող, անկրօն անաստուածներ, մատնիչներ, բաղդախնդիր եւ ուրիշ ինչ-ինչ ածականներ“։ Իր նման վանականներն են միայն, որ կրնան խորհիլ այդպէս, իրենց անգործ առանձնութեան մէջ։

Գալօն աւելի եւ աւելի ոգեւորվում էր. նրա կայտառ դէմքը կարմրել էր. նրա շրթներից ադագ-ադագ թափվում էին իւրաքանչիւր պարբերութիւնները. կարծես նրանք բանտարկված շղթայված լինէին իր մէջ եւ այսօր ազատ ասպարէզ գտնելով, դուրս էին նետվում և կապարի պէս խոցոտում լսողներին։ Նրանց մէջ արդէն սկսել էր արթնանալ բարկութիւնը Արիջանն ուղղակի կատաղել էր. նա բռնել էր աթոռի բազկից եւ պատրաստ էր առաջին հանդիպած կղերականին կամ պաշտօնեային խփել. սակայն զուրկ մնալով այդ „բաղդաւորութիւնից“ յանկարծ ընդհատեց Գալօյի խօսքերը եւ բարկութեամբ պոռաց. — „Սրիկա, ստահակ, մատնիչ, անաստուած, ամենն ալ իրենք են....“ յետոյ մի քանի անգամ իր թոքերի ամբողջ զօրութեամբ շունչ քաշեց։

(կը շարունակվի) ՎԻԹ.

ԼՕՆԴՕՆ· “ՀՆՉԱԿ„-Ի ՏՊԱՐԱՆ։

ՍԱՍՈՒՆ

1

Լըսէ՝ թէ քեզ պատմեմ ես ինչ.
Սասուն ըսօր չէր ըլլէր ջինջ,
Թէ հայեր մեզ օգնէին։
կարմիր դրօշը Սասնի գլխին
դեռ կը խաղար ֆըրֆըրալին,
Թէ զէնք ու հաց ըլլային։

2

Հայոց երկիրն գժոխք եղեր.
Ընտեղ հայը սաղ-սաղ կերուէր,
Շունչի տեղ մը էլ չը կար.
Վէրքի, պարտքեր, աւեր, թալան
Սեծցեր Պասսայ սարի նըման՝
Կը խեղդուէինք մենք անճար։

3

Հէջ որ մէկէն ամսի մէջէն
Շանթ չը վառէր լոյս, հըրեղէն,
Էնպէս կրակոտ, հարատատ
Խօսք մը հասաւ, մեզի վառաւ.
Էլ ըսինք, որ վերջը եկաւ—
Թէ տի մեռնինք, թէ ազատ։

4

Հայու սիրտը բոց էր կարեր.
Թշնամու դէմ ոտքի ելլեր
Կրուիւ կենէր ըմեն տեղ.
Պաշտէր հաւատքն ազատութեան,
Կուզէր բաղդը ժողովրդեան,
Էնոր ցաւին ճար ու դեղ։

5

Էշ արիւը կարմրըեցաւ,
Արեան գունով բռնըեցաւ—
Թնդաց կուի որոտը....
Ատոդի նըման սիրուն, պոյծառ
Քաջեր ինկան ազգին համար,
Եօթ հարիւրին դէմ եօթը։

6

Վիանի՞, քանի կըռիւ եղաւ,
Հայը զարկեց, զարկուաւ, սպանուաւ։
Ըմեն բանտեր լեցուցին,
Ցանգանք տըւին, աքսոր տարին,
Կնկանց պատիւ ամօթցուցին,
Թառլան կարիճք կախեցին։

7

Օրն էր հասեր Սասնի գլխուն։
Երկու-երեք տարի գիտուն
Խաշներ, հօտեր թալնեցին,
Էլէցին հունձք, տըներ, սնտաս,
Թիւրք էլ, քիւրդ էլ ըմեն ամառ
Սեղնէ շատեր սպանեցին։

8

Յորեքինդի ամսուն կրկար։
Մեր մէջ հեռուէն եկոր մը կար,
Առաքեալ մը մեծաւոր.
Էնոր լուր մը հասաւ մէկէն,
Թէ շատ քրդեր կը գան մեր վրէն,
Ըմեն զէնքով, ձիաւոր։

9

Կարիճք մէկտեղ հաւաքուեցան,
Սրբան խէնչար, դանակ, հրացան
Եւ դէմ ելան քրդերուն.
Շատ տեղեր մեծ կուի բռնուան,
Արին արիւն, արիւն թափան,
Ցեռ քըշեցին թշնամուն։

10

Ընցաւ վախտ մը... Օր մ'ալ լուսուն,
Երբ կը վառուէր արշալուսուն,
Սասնի բարձրը սարերէն
Ցեսնանք թէ ինչ...սաղ աշխարը
Պաւեր են քիւրդ, թիւրք զորքերը,
Դուման պէս գան մեր վրէն։

(Արտանկարելու իրաւունքը վերապահված է)

11

Ռազմիարը հաւար կանչեց.
Ըմեն տեղ էլ մարդիկ ղրկեց,
Եւ խօսաւ մեզ ամենուս.—
„Ցրա՞ք, օրն հասաւ. էլ ի՞նչ մնանք.
„Եղնենք, կռուի՞նք, Սասուն չը տանք.
„Մեռնի՞նք և փառք ոսկրնուս։„

12

Լսաւ, լըսեց, ռէխք պագաւ...
Ըմեն ուռն, գեղ իր ճար՝ արաւ,
Թողվեց մնացած հաց, պաշար,
Եւ դարդիկեան դաշտեր, գեղեր,
Հազարներով եկան սարեր,
Պահուան Անոսք Ֆրէֆրքաք։

13

Երիք շաբաթ կարիճ խմբեր
Պաշտպանեցին Սասնի գեղեր...
Թնդանօթներն Թրքերու
Շուտ-շուտ լերանց մէջ գոռային.
Հրացանները կարձրկէին
Երկու կողմն իրարու։

14

Ոչիրան երկուքն էր մեծնախ։
Ընտօքի վրէն չը կար խօսող.
Սև ամպ եկեր նստեր էր
Ըմենու էլ ճակտի վրէն.
Ուտեստ, վառօթ — հատեր ըմեն,
Սահն էր բուռը իր դրեր։

15

Ինդին, ըսես մարեխ փուռէր,
Քիւրդ աշիրեթք, թուրքի զորքեր
Ուրախութեն կենէին,
Կրակներու շուրջ կը կանչէին,
Կը պօռային, կը խաղային,
Իրենց աւար լափէին։

16

Լուսուն, երբ որ երկինք վառուաւ,—
Էգ օր քաղցէն շատ հայ մեռաւ,—
Թիւրքի խօսքէն խաբուելով,
Սեղնէ հարիւր վաթսուն հոգի
Սարիթուան, նետուան մէջը փորի՝
Թաշիբօղուկ Թիւրք ձեռքով։

17

Արեւն նոր էր ելեր երինէն,
Երբ զորքերը հասան մեր վրէն...
Շատ մահ տըւինք ու առինք,
Իխտեար, կընիկ, չահիլ տըղայ
Կռիւ կենէին.... քաջեր — ահա՛
Էնոնց պէսներ քիչ ունինք։

18

Հիտուն հազար թշնամու դէմ՝
Քանի՞ հազար մեզնէ ըսեմ,
Ըմեն նօթի և անգէն....
Զարկաւ Թիւրքը. մեզ կոտրեց,
Հազարներով ջարդեց, մորթեց,
Էրաւ, թալնեց գեղ ըմեն։

19

Զորս-հինգ շաբաթ էդպէս կատղեց,
Կընիկ, չօջուխ պղծաւ, մորթեց....
Շատ հայ սպանուան, շատ փախան,
Քանի՞ կարիճ մեզնէ ինիտ,
Ռազմիարն էլ կուին բռնուաւ...
Սասուն եղաւ գերեզման...

20

Հա՛, էդպէս էր... ըսեմ էլ ինչ.
Սասուն ըսօր չէր ըլլէր ջինջ,
Թէ հայեր մեզ օգնէին։
կարմիր դրօշը Սասնի գլխին
դեռ կը խաղար ֆըրֆըրալին,
Թէ զէնք ու հաց ըլլային։

27 փետրվարի 95. ԽԵՆԹԸ.